



Հաստատված է

ԵՊՈՒՄՆԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐԻՒՐԴ 2010թ. հունիսի 17-ի թիվ 4 նիստում:

Ա. Ն. Միմոնյան

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՆԱԽԱՐԱՆՈՒՄ ՍՏԱՅԱԾ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. ԵՊՀ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցման (այսուհետև՝ շրջանավարտների հարցման) կանոնակարգը սահմանում է ԵՊՀ շրջանավարտների կողմից համալսարանում ստացած կրթության արդյունավետության և կրթական ծառայությունների որակի գնահատման կարգը:
- 1.2. Շրջանավարտների հարցումը հանդիսանում է ԵՊՀ որակի ապահովման ներքին համակարգի կարևորագույն բաղադրիչը:
- 1.3. Շրջանավարտների հարցման կանոնակարգը հաստատում և դրանում փոփոխություններ ու լրացումներ է կատարում ԵՊՀ գիտական խորհուրդը:

2. Շրջանավարտների հարցման անցկացումը

- 2.1. Շրջանավարտների հարցումն իրականացվում է բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական ուսումնական տարվա վերջում (հունիս-հուլիս ամիսներին):
- 2.2. Շրջանավարտների հարցումն իրականացվում է համալսարանի ուսումնամեթոդական վարչության կողմից:
- 2.3. Շրջանավարտները իրենց ֆակուլտետի ղեկավարից ստանում են հարցաթերթը, լրացնում և դիպլոմները ստանալիս հանձնում են ուսումնամեթոդական վարչության կազմակերպչական բաժին:
- 2.4. Շրջանավարտների հարցումն անցկացվում է սույն կանոնակարգին կից գնահատման հարցաթերթով (հավելված 1), որում շրջանավարտը 5 միավորանոց սանդղակով գնահատում է առաջադրված հարցերը:
- 2.5. Շրջանավարտների հարցումն անանում է:

3. Շրջանավարտների հարցման արդյունքների մշակումը և պահպանումը

- 3.1. Շրջանավարտների հարցման արդյունքները մշակվում են Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնում:
- 3.2. Հարցաթերթում կատարված ուղղումները չեն հաշվարկվում:

4. Շրջանավարտների հարցման արդյունքների օգտագործումը

- 4.1. Շրջանավարտների հարցման արդյունքները քննարկվում են ֆակուլտետների խորհուրդներում, այնուհետև Համալսարանի գիտական խորհրդում՝ Համալսարանի գործունեության տարբեր ասպեկտների որակի բարելավմանն ուղղված միջոցառումներ մշակելու և իրականացնելու նպատակով: